

ըղձաւորութիւնը, որ վերածելի է ի վերջոյ կամքի տխարագոնի մը: Նոյնիսկ հիմա, անոնք, գաղութներու մռայլ խորշերուն մէջ չեն հերքեր իրենց արքայազարմ ծագումը ու կը շարունակեն վառ պահել իրենց սրբազան պատրանքները:

Ընկեր Մաթիկ յիմար մը չէր, բայց քիչ տարբեր բան մը: Աղանդաւոր էր ծնած: Թերեւս այս անգիտակից կոչումն էր, որ այնքան հեշտ ըրաւ իր ճամբորդութիւնը, զոր ըրաւ անիկա պաշտօնականէն վեր լրջութեամբ: Ո՞ւր: Բախտի՛ն, պիտի պատասխանէր մեր կողմերու երիտասարդ մը, սիրային արկածէ մը ջարդուփշուր դուրս գալէ յետոյ: Ո՞ւր: Դէպի Ժողովուրդ:

Ընկեր Մաթիկ յիմար մը չէր: Ոչ ալ անօթի ձկնորս մը, լիճի ափին Յիսուսներու սպասող: Մօտաւորապէս տարի մը անիկա հնոցին մէջն էր մեր օրերու ամէնէն հզօր գաղափարին: Այսի՞նքն: Ունէր հոգեւոր կանխապատրաստութիւն: Դէպի Կիլիկիա, խճուղիներու փոշիին մէջ, անիկա ինքզինքը կ'երազէր իր հաշուոյն իրագործած ըլլալուն՝ մեծ բնաբանը, - դէպի Ժողովուրդ, աւելի հարազատ փոփոխակով մը՝ դէպի գեղացին: Գլխին կար լաչակ, ինչպէս ըրած էին հարիւով ընկերակիցները, փոշիէն ու արեւէն պատսպարելու համար մազերը: Անիկա կը նմանէր ուռսական վէպին հերոսներուն, դէպի Սիպերիա տարագրումի մը տեքորով: Անիկա կը նմանէր...

Բայց որքա՛ն նեղ են վէպի մը էջերը: Ինչո՞ւ չըսել, չկրնար ըսել ինչ որ զգաց անոր հոգին ազատագրման սա առաջին գիշերը, երբ գլուխը սօսիի մը ուսին՝ քնացաւ անուշ, առանց վերմակի, առանց սարսափի: Ո՛չ վարդապետ, ո՛չ սարկաւազ, ո՛չ քաղաքական Ժողովոյ յեղափոխական անդամները, ու լեռներուն խռովայոյզ ընկերները: Ի՛նչ խոնարհ հոգիով կերած էր անիկա աղբիւրին թաթիւուած հացը եւ հոսանքի եզրին բուս ջրկոտեմը: Արդար, խաղա՛ղ՝ անոր զարթնումը: Օրուան մը գնացք, փոշի, յոգնութիւն, արեւի հարուած, մա՛նաւանդ տառապանքի ընդհանուր մթնոլորտը զինքը հաշտեցուցին իրեն,